ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՑՑԻ ԿԱՄ ԵՏ-ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՆ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՍՑԵ ՔԱՂԱՔ	ԻՆԴԵՔՍ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ IA ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ	GR ԿՈԴ

Այս լիազորության ձևաթուղթը լրացնելու նպատակով.

“Նահանգ” բառը նշանակում է Կալիֆորնիայի տարածաշրջանի ժամանակավոր օժանդակության (IA) գործակալություն(ներ), որ Սոցիալական ծառայությունների Կալիֆորնիայի բաժինը ժամանակավոր օգնության հատուցման համաձայնություն ունի և, որ Ձեզ հանրային օգնություն է վճարել:

“SSI/SSP նպաստներ” բառը նշանակում է “Հավելյալ ապահովության եկամուտ/Նահանգային հավելյալ վճարման” նպաստներ՝ Սոցիալական ապահովության որոշման Վերնագիր XVI-ի համաձայն:

Ի՞նչ գործողություններ եմ ես լիազորում, երբ ստորագրում եմ այս լիազորությունը և նշում “Միայն նախնական հայցեր” հատվածը:

☐ **Միայն նախնական հայցեր**

Դուք Սոցիալական ապահովության վարչության (SSA) հանձնաժողովին լիազորում եք Նահանգին հատուցել այն որոշ կամ ամբողջ գումարի համար, որ Նահանգը Ձեզ է վճարել քանի դեռ SSA-ը որոշում ընդունելու ընթացքում է այն բանի մասին, թե Դուք իրավունակ եք արդյոք ստանալ SSI/SSP նպաստներ: Եթե Դուք իրավունակ լինեք, SSA-ը Նահանգին կվճարի Ձեզ հասանելի SSI/SSP հետադարձ նպաստները: Հատուցումը ծածկում է SSI/SSP նպաստներ ստանալու Ձեր իրավունակության առաջին ամսվանից սկսած մինչև Ձեր SSI/SSP ամսական նպաստների սկսելու ժամանակահատվածը:

Եթե Նահանգը չի կարող դադարեցնել Ձեզ կատարած վերջին վճարումը, SSA-ը կարող է հատուցել Նահանգին այս լրացուցիչ վճարման գումարը:

Ի՞նչ գործողություններ եմ ես լիազորում, երբ ստորագրում եմ այս լիազորությունը և նշում “Միայն ետ-իրավունակության գործ” հատվածը:

☐ **Միայն ետ-իրավունակության գործ**

Դուք Սոցիալական ապահովության վարչության (SSA) հանձնաժողովին լիազորում եք Նահանգին հատուցել այն որոշ կամ ամբողջ գումարի համար, որ Նահանգը Ձեզ է վճարել քանի դեռ SSA-ը որոշում ընդունելու ընթացքում է այն բանի մասին, թե Ձեր SSI/SSP նպաստները կարող են վերականգնվել դադարեցման կամ ընդհատվելուց հետո: Եթե Ձեր SSI/SSP նպաստները վերականգնվեն, SSA Նահանգին կվճարի Ձեզ հասանելի SSI/SSP հետադարձ նպաստները: Հատուցումը ծածկում է ամսվա այն օրվանից, երբ վերականգնումն ուժի մեջ է մտնում մինչև Ձեր SSI/SSP ամսական նպաստների սկսելու ժամանակահատվածը:

Եթե Նահանգը չի կարող դադարեցնել Ձեզ կատարած վերջին վճարումը, SSA-ը կարող է հատուցել Նահանգին այս լրացուցիչ վճարման գումարը:

Ինչպե՞ս կարող է Նահանգն օգտագործել այս ձևաթուղթը, երբ նախնական հայցերի և ետ-իրավունակության գործերի հատվածները այս ձևաթղթի մասն են կազմում:

Նահանգը կարող է օգտագործել այս ձևաթուղթը միայն մեկ իրավիճակի համար՝ կամ նախնական հայցի համար, կամ՝ ետ-իրավունակության գործի համար: Եթե երկու հատվածներն էլ նշված են, այս ձևաթուղթը անվավեր է: Դուք և Նահանգը պետք է ստորագրեք և թվագրեք նոր ձևաթղթի վրա նշված միայն մեկ հատվածը:

Ի՞նչ տեսակի Նահանգային վճարումն է որակավորված SSA-ի կողմից հատուցման համար:

SSA-ը կարող է Նահանգին հատուցել այն վճարման համար, որը վճարվել էր Նահանգի կամ տեղական ֆոնդերից: Նահանգը չի կարող հատուցվել այնպիսի վճարումների համար, որոնք ամբողջությամբ կամ մասամբ կատարվել էին Դաշնային ֆոնդերից:

Ինչպե՞ս է SSA-ը որոշում, թե որքանն իմ SSI/SSP գումարից վճարի Նահանգին:

SSA-ը վճարման գումարը որոշում է հիմնված երկու նկատառումների վրա: Առաջինը՝ SSA-ը հաշվի է առնում Նահանգի կողմից հայցված գումարը, իսկ երկրորդը՝ SSA-ը հաշվի է առնում Նահանգին վճարմանը մատչելի Ձեր հետադարձ SSI/SSP գումարի քանակը: SSA-ը կարող է հատուցել Նահանգին միայն այն ամսվա ընթացքում կատարված վճարման համար, որ Դուք վճարում եք ստանում Նահանգի և SSI/SSP-ի կողմից նույն ամսվա ընթացքում: SSA-ը չի վճարի Նահանգին Ձեր ստացածից ավել գումար, քան Ձեր ստացածը SSI/SSP հետադարձ ժամանակահատվածում:

Ինչքա՞ն ժամանակով այս լիազորությունը ուժի մեջ կլինի Նահանգի և իմ համար, եթե ես նշեմ ‘Միայն նախնական հայցեր’ հատվածը:

Այս լիազորությունն ուժի մեջ կմնա Ձեր և Նահանգի համար տասերկու (12) ամսով: 12 ամիսը կսկսվի այն ամսաթվից, երբ SSA-ը Նահանգից ստանում է լիազորությունը և կավարտվի 12 ամիս հետո: Սակայն, էլեկտրոնային համակարգ օգտագործող Նահանգի համար՝ 12 ամիսը կսկսվի այն ամսաթվից, երբ Նահանգը էլեկտրոնային համակարգի միջոցով հայտնում է SSA-ին այն բանի մասին, որ Նահանգը ստացել է լիազորությունը և կավարտվի 12 ամիս հետո: Դուք և Նահանգի ներկայացուցիչը պետք է ստորագրեք և թվագրեք լիազորությունը, որպեսզի այն ուժի մեջ մտնի:

Այս օրենքին բացառություններ կան: Նահանգը պետք է լիազորությունն ուղարկի SSA-ին որոշակի ժամանակահատվածում: SSA-ը պետք է ձևաթուղթը ստանա 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած լիազորությունը Ձեր ստորագրելու օրվանից: Եթե ձևաթուղթը ուշանա, SSA-ը չի ընդունի այդ ձևաթուղթը որպես ուժ ունեցող լիազորություն: էլեկտրոնային համակարգ օգտագործող Նահանգի համար՝ SSA-ը պետք է ստանա լիազորության տեղեկատվությունը 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Նահանգը համապատասխանեցրեց Ձեր SSI գրանցումները Ձեր նահանգի գրանցումների հետ: Եթե տեղեկատվությունը ուշանա, SSA-ը չի ընդունի Նահանգի կողմից ուղարկված տեղեկատվությունը: SSA-ը Նահանգին չի վճարի Ձեր SSI/SSP հետադարձ նպաստներից ոչ մեկի համար: SSA-ը Ձեզ կուղարկի Ձեզ հասանելի SSI/SSP գումարը՝ հիմնված SSA-ի կանոնավոր վճարման օրենքների վրա:

Կարո՞ղ է արդյոք լիազորությունը ուժի մեջ մնալ ավելի երկար, քան 12 ամիս ժամանակահատվածը: Կարո՞ղ է արդյոք լիազորությունը ավարտվել մինչև 12 ամիս ժամանակահատվածը, կամ՝ դրանից հետո:

Լիազորությունը կարող է 12 ամիս ժամանակահատվածից ավելի երկար ուժի մեջ մնալ, եթե Դուք

- դիմեք SSI/SSP նպաստի համար մինչև Նահանգը ստանա լիազորության ձևաթուղթը, կամ
- դիմեք 12 ամսվա ընթացքում, որ լիազորությունը ուժի մեջ է, կամ
- օրինական բողոքարկում լրացնեք Ձեր նախնական հայցի վերաբերյալ SSA-ի որոշման դեմ:

Լիազորության ժամանակահատվածը կարող է ավարտվել մինչև 12 ամիս ժամանակահատվածի վերջը, երբ հետևյալ գործողություններից որևէ մեկը տեղի ունենա.

- SSA-ը առաջին SSI/SSP վճարումը կատարի Ձեր նախնական հայցի համար, կամ
- SSA-ը վերջնական որոշում կայացնի Ձեր հայցի վերաբերյալ, կամ
- Նահանգը և Դուք համաձայնվեք դադարեցնել այս լիազորությունը:

Լիազորության ժամանակահատվածը կավարտվի ամսվա այն օրվանից, երբ այս գործողություններից մեկը տեղի ունենա:

Ինչքա՞ն ժամանակով է այս լիազորությունն ուժի մեջ Նահանգի և իմ համար, եթե ես ճշեմ 'Միայն ետ-իրավունակության գործ' հատվածը:

Այս լիազորությունն ուժի մեջ կմնա Ձեր և Նահանգի համար տասերկու (12) ամսով: 12 ամիսը կսկսվի այն ամսաթվից, երբ SSA-ը Նահանգից ստանում է լիազորությունը և կավարտվի 12 ամիս հետո: Սակայն, էլեկտրոնային համակարգ օգտագործող Նահանգի համար՝ 12 ամիսը կսկսվի այն ամսաթվից, երբ Նահանգը էլեկտրոնային համակարգի միջոցով հայտնում է SSA-ին այն բանի մասին, որ Նահանգը ստացել է լիազորությունը և կավարտվի 12 ամիս հետո: Դուք և Նահանգի ներկայացուցիչը պետք է ստորագրեք և թվագրեք լիազորությունը, որպեսզի այն ուժի մեջ մտնի:

Այս օրենքին բացառություններ կան: Նահանգը պետք է լիազորությունն ուղարկի SSA-ին որոշակի ժամանակահատվածում: SSA-ը պետք է ձևաթուղթը ստանա 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած լիազորությունը Ձեր ստորագրելու օրվանից: Եթե ձևաթուղթը ուշանա, SSA-ը չի ընդունի այդ ձևաթուղթը որպես ուժ ունեցող լիազորություն: Էլեկտրոնային համակարգ օգտագործող Նահանգի համար՝ SSA-ը պետք է ստանա լիազորության տեղեկատվությունը 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Նահանգը համապատասխանեցրեց Ձեր SSI գրանցումները Ձեր նահանգի գրանցումների հետ: Եթե տեղեկատվությունը ուշանա, SSA-ը չի ընդունի Նահանգի կողմից ուղարկած տեղեկատվությունը: SSA-ը Նահանգին չի վճարի Ձեր SSI/SSP հետադարձ նպաստներից ոչ մեկի համար: SSA-ը Ձեզ կուղարկի Ձեզ հասանելի SSI/SSP գումարը՝ հիմնված SSA-ի կանոնավոր վճարման օրենքների վրա:

Կարո՞ղ է արդյոք լիազորությունը ուժի մեջ մնալ ավելի երկար, քան 12 ամիս ժամանակահատվածը: Կարո՞ղ է արդյոք լիազորությունը ավարտվել մինչև 12 ամիս ժամանակահատվածը, կամ՝ դրանից հետո:

Լիազորությունը կարող է 12 ամիս ժամանակահատվածից ավելի երկար ուժի մեջ մնալ, եթե Դուք օրինական բողոքարկում լրացնեք: Դուք պետք է Ձեր բողոքարկումը լրացնեք SSA-ի կողմից պահանջած ժամանակահատվածում:

Լիազորության ժամանակահատվածը կարող է ավարտվել մինչև 12 ամիս ժամանակահատվածի վերջը, կամ կարող է ավարտվել, երբ հետևյալ գործողություններից որևէ մեկը տեղի ունենա.

- SSA-ը կատարի առաջին SSI/SSP վճարումը Ձեր ետ-իրավունակության գործի համար՝ ընդհատման կամ դադարեցման ժամանակահատվածից հետո, կամ
- SSA-ը վերջնական որոշում կայացնի Ձեր հայցի վերաբերյալ, կամ
- Նահանգը և Դուք համաձայնվեք դադարեցնել այս լիազորությունը:

Լիազորության ժամանակահատվածը կավարտվի ամսվա այն օրվանից, երբ այս գործողություններից մեկը տեղի ունենա:

Կարո՞ղ է արդյոք SSA-ը օգտագործել այս լիազորության ձևաթուղթը SSI/SSP նպաստների համար իմ դիմումի ամսաթիվը պաշտպանելու համար:

SSA-ը կարող է օգտագործել այս ձևաթուղթը Ձեր դիմումի ամսաթիվը պաշտպանելու համար, եթե Դուք ճշել եք 'Միայն նախնական հայցեր' հատվածը: Երբ Դուք ստորագրում եք այս ձևաթուղթը, Դուք հայտնում եք, որ Դուք մտադրություն ունեք SSI/SSP նպաստների դիմելու, եթե արդեն չեք դիմել այդ նպաստների համար:

Դուք ունեք վաթսուն (60) օր՝ սկսած այն օրվանից, երբ Նահանգը ստացավ այս ձևաթուղթը, SSI/SSP նպաստների դիմելու համար: Ձեր իրավունակությունը՝ ստանալ SSI/SSP նպաստներ, կարող է հայտնիսկ սկսվել այն օրվանից, երբ Դուք ստորագրեցիք այս լիազորությունը, եթե դիմեք 30-օրյա ժամանակահատվածում: Եթե դիմեք SSI/SSP նպաստներին 60-օրյա ժամանակահատվածից հետո, այս ձևաթուղթը չի պաշտպանի Ձեր դիմումի ամսաթիվը: Ձեր դիմումի ամսաթիվը կլինի այս ձևաթուղթը ստորագրելուց հետո:

Ինչպե՞ս կարող եմ ես բողոքարկել Նահանգի որոշման դեմ, եթե համաձայն չեմ այդ որոշման հետ:

Դուք կարող եք չհամաձայնվել այն որոշման հետ, որը Նահանգը կայացրել էր հաստատման ընթացքում: Դուք Նահանգից ծանուցում կստանաք, որը Ձեզ կհայտնի, թե ինչպես կարող եք բողոքարկել այս որոշումը: Դուք չեք կարող բողոքարկել SSA-ին, եթե համաձայն չեք Նահանգի որևէ որոշման հետ:

10 աշխատանքային օրվա ընթացքում, որ Նահանգը ստացել էր SSA-ի հաստատման գումարը, Նահանգը Ձեզ պետք է ծանուցում ուղարկի: Այդ ծանուցումը Ձեզ երեք բան կհայտնի՝ (1) Նահանգի կողմից կատարած վճարման գումարի բանակը, (2) որ SSA-ը Ձեզ նամակ կուղարկի, որը կբացատրի, թե ինչպես SSA-ը կվճարի Ձեզ հասանելի մնացած SSI/SSP գումարը (եթե կա) և (3) ունկնդրության Ձեր իրավունքի մասին Նահանգի հետ՝ ներառյալ տեղեկություն, թե ինչպես խնդրել Նահանգային ունկնդրություն:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՀԱՏԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԱՄՍԱԹԻՎ
ՆԱՀԱՆԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԱՄՍԱԹԻՎ

Եթե դիմորդը այս լիազորությունը նշանով է ստորագրում, ապա ստորագրությունը պետք է երկու վկա կրի, ովքեր կտրամադրեն իրենց ստորագրությունները, հասցեները և ներքևում ստորագրածի ամսաթվերը:

ՎԿԱՅՎԵԼ Է.			ՎԿԱՅՎԵԼ Է.		
ՀԱՍՑԵ (ԹԻՎ, ՓՈՂՈՑ).			ՀԱՍՑԵ (ԹԻՎ, ՓՈՂՈՑ).		
ՔԱՂԱՔ	ՆԱՀԱՆԳ	ԻՆԴԵՔՍ	ՔԱՂԱՔ	ՆԱՀԱՆԳ	ԻՆԴԵՔՍ